

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒ ԴԵՄ՝ ՀԱՅԵՐՈՒ ԿՈՂՄԵ ԲԱՅՈՒԱԾ ԴԱՏԸ ՄԵՐԺՈՒԱԾ Է

Յուլիս 30-ին Միացեալ Նահանգներու շրջանային դատարանի դատաւոր Մարկարիտ Մուրօ մերժած է խումբ մը հայերու կողմէ «Տոչ Պէնք» եւ «Տրէստնըր Պէնք» դրամատուներու դէմ բացուած դատը, ցոյց կու տան դատական փաստաթուղթերը:

Որոշումին մէջ դատարանը գլխաւորաբար մտահոգութիւն յայտնած է այն կապակցութեամբ, որ շատ երկար ժամանակ անցած է՝ դատը բանալու համար, նաեւ այն որ, բաւարար փաստաթուղթեր չկան դրամատան հաշիւները ճշգրտուելու եւ գումարները իրենց իրաւատիրոջ ետ չվերադարձուած ըլլալը փաստելու համար:

2006-ին երեք հայազգի փաստաբաններ՝ Պրայըն Քափաթէք, Վարդգէս Եղիայեան, եւ Մարք Կիրակոս, Յեղասպանութեան գոհ հայերու ժառանգորդներուն անունով դատ բացած էին գերմանական երկու դրամատուներուն դէմ: Անոնք կը պահանջէին ետ վերադարձնել

հայերու պատկանող միլիոնաւոր տոլար դրամ եւ կալուածներ, որ պահ դրուած էր «Տոչ Պէնք» եւ «Տրէստնըր Պէնք» դրամատուներուն մօտ:

Հայկական կողմի փաստաբանները կը մեղադրէին երկու դրամատուները, որ 1915 թուականէն առաջ Հայ ընտանիքներու կողմէ պահ դրուած գումարները, ինչպէս նաեւ թրքական կառավարութեան կողմէ անտեսման գողցուած հարստութիւնները գտնուած են այդ դրամատուներուն մօտ:

Գերմանական դրամատուները նաեւ կը մեղադրուէին այն բանի համար որ, անոնք օգտուած են Օսմանեան Կայսրութեան կողմէ Հայ ժողովուրդի դէմ գործուած սպանդէն, գաղտնի պահելով եւ արգելք հանդիսանալով որ Հայ ընտանիքները կարողանան տիրանալ իրենց իրաւունքներուն:

Հայկական կողմի փաստաբանները որոշած են չբողոքարկել դատարանի որոշումը:

## ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՒԵՑԱՒ



Մետվետել եւ Սարգսեան կը հետեւին երկու երկիրներու պաշտպանութեան նախարարներու փաստաթուղթերը ստորագրելուն

Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահներ՝ Սերժ Սարգսեանի եւ Տիմիդրի Մետվետելի միջեւ տեղի ունեցած բանակցութիւններու աւարտին, Ուրբաթ Օգոստոս 20-ին Երեւանի մէջ ստորագրուեցաւ Հայաստանի մէջ ռուսաստանեան ռազմակայանի տեղակայման ժամկէտը երկարաձգելու մասին արձանագրութիւնը:

Երկու երկիրներու պաշտպանութեան նախարարներ՝ Մէյրան Օհանեանի եւ Անատոլի Սերտիլկովի ստորագրած փաստաթղթով փոփոխութիւններ կը կատարուին ռուսաստանեան ռազմակայանի մասին 1995 թուականի Մարտի 16-ի պայմանագրին մէջ:

Ըստ այդ փոփոխութիւններուն, պայմանագրի գործողութեան ժամկէտ կը սահմանուի 49 տարի, նախկին 25-ի փոխարէն:

Փաստաթուղթը կ'արձանագրէ նաեւ, որ ռուսաստանեան ռազմակայանը Հայաստանի Հանրապետութեան տարածքին գտնուելու ժամանակաշրջանին, բացի Ռուսաստանի Դաշնութեան շահերու

պաշտպանութեան գործառույթներէն, Հայաստանի Հանրապետութեան Զինուած Ուժերու հետ մի-



Տիմիդրի Մետվետել ծաղիկներ կը գետնեղէ Հայոց ծեղասպանութեան նահատակներուն Յուշակոթոյին

ատեղ պիտի ապահովէ Հայաստանի անվտանգութիւնը:

Պետական այցով Հայաստան գտնուելով Ռուսաստանի նախագահ Տիմիդրի Մետվետել մաս-

Շաբ.ը էջ 5

## «ՄԱՍԻՍ»Ի 30ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՆՇՈՒԵՑԱՒ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԵԱՄԲ



«Մասիս»ի 30-ամեակի կարկանդակի հատման արարողութիւնը

Կիրակի, Օգոստոս 15ին, 2010, չիշատակելի օր մը եղաւ «Մասիս» շաբաթաթերթի անմիջական ընտանիքի եւ համակրական շրջանակին համար: Արդարեւ, այդ օր երեկոյեան, Տէր եւ Տօքթ. Արամ եւ Անահիտ Բլիկեաններու Լա Գանիատա Ֆլինթրիճի գեղատեսիլ տան պարտէզին մէջ, ընտրանի հասարակութեան մը ներկայութեան նշուեցաւ մեր թերթի հիմնադրութեան 30-ամեակը:

Հրաւիրեալներու մէջ կը նշմարուէին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոս Մեսրոպ Շապուրեան, Արեւմտեան թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ներկայացուցիչ Արժ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. եւ Երէջկին Պայծառ Մատարեան, Կլենտէյլի նախկին քաղաքապետ Ֆրէնք Գինթերօ, Ամերիկայի Հայ

Գրողներու Միութեան նախագահ՝ Տէր եւ Տիկ. Թորգոմ Փոստաճեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ Համբիկ Սարաֆեան, Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի եւ յարակից կառուցներու ներկայացուցիչներ, լրագրողներ եւ ծանօթ մտաւորականներ ու համակիրներ:

Օրուան հանդիսավարն էր «Մասիս»ի խմբագրական կազմէն Յարութ Տէր Դաւիթեան: Ան «Մասիս»ի 30-ամեակի կազմակերպիչ յանձնախումբին անունով ողջունեց ներկայ հասարակութիւնը եւ բարի ժամանց մաղթեց հրաւիրեալներուն միաժամանակ շնորհակալութիւն յայտնելով հիւրընկալ Բլիկեան ամուլին:

Սեղաններու օրհնութենէն ետք

Շաբ.ը էջ 18

## ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՀԱՐՑՈՎ ԵՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՅԱՆՑԱՒՈՐ ԳՏԱԾ Է ԹՈՒՐԹԻԱՅԻՆ

Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանը բաւարարելով Պոլսահայ լրագրող եւ «Ակօս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Տինքի ընտանիքի դիմումը, վճռած է, որ թրքական պետութիւնը յանցաւոր է Տինքի սպանութիւնը չկազմակերպելու համար, կը յայտնեն թրքական թերթերը:

Դատարանը յատկապէս գտած է որ, թրքական ինքնութիւնը ենթադրաբար անարգելու մեղադրանքով դատելով Տինքին՝ թուրքիան փաստօրէն ոտնահարած է խօսքի ազատութեան իրաւունքը եւ պատշաճ միջոցներ ձեռք չէ

առած Տինքին պաշտպանելու համար՝ հակառակ որ տեղեակ եղած է, Տինքի դէմ բազմաթիւ սպանուելիքներու մասին:

Ըստ թրքական «Վաթան» թերթին, Եւրոպական Դատարանը նաեւ դատապարտած է թրքական պետութիւնը, Տինքի սպանութեան գործով յարուցուած դատական գործընթացը ոչ արդիւնաւէտ ձեւով կազմակերպելուն համար:

Թէեւ Մարդու իրաւունքներու եւրոպական Դատարանը որոշումի մասին որեւէ յայտարարութիւն տակաւին չէ կատարած, սակայն կ'ակնկալուի, որ վճիռը պաշտօնապէս հրապարակուի Սեպտեմբերին:







ԼՈՒՐԵՐ

ԱՊՏՈՒԼԼԱՅ ԿԻԼԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԵՂԲՕՐ ՀԵՏ



Թրքական իշխանութիւնների կողմից Մարդու իրաւունքների եւրոպական դատարան ուղարկած Հրանդ Տինքի դէմ խայտառակ պաշտպանական ճառից յետոյ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Կիլը, Թարաբիա նախագահական պալատում ընդունել է 2007-ին սպանուած Ստամպուլի հայկական «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանդ Տինքի եղբորը:

Թրքական Haberturk-ի փոխանցմամբ՝ Հրանդ Տինքի եղբորը՝ Խոսրով Տինքին, Թուրքիայի նախագահն էր հրաւիրել հանդիպման: Հանդիպմանը Խոսրով Տինքը եկել էր տաքսիով 18:15-ի սահմաններում եւ նախագահական պալատի դարպասների մօտից ոտքով քայլել մինչեւ պալատ:

Մօտ 55 րոպէ տեւած հանդիպումից յետոյ Խոսրով Տինքը լրագրողներին յայտնել է. «Մասնաւոր խնդիրներ քննարկեցինք, խօսեցինք: Սա տառապանքները եւ ցաւերը կիսող հանդիպում էր», յաւելելով, որ այլ հարցերի չի կարող պատասխանել եւ նախագահականին պատկանող մեքենաներից մէկով հեռացել է նախագահական պալատից:

Խոսրով Տինքն աւելի վաղ յայտարարել էր, որ իր արիւնը սառել էր, երբ ծանօթացել էր Հրանդ Տինքի դէմ պետական պաշտպանական ճառին, որի մէջ նշուած է, թէ Հրանդ Տինքը վիրաւորել է թիւրքականութիւնը եւ ազգային ատելութիւն սերմանել:

Նշենք, որ օրեր առաջ Պաքու կատարած պաշտօնական այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Կիլը 3 անգամ յայտարարել է, որ Թուրքիայի քաղաքացի Հրանդ Տինքն սպանուեց, որովհետեւ պետութիւնն անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ չէր իրականացրել:

Կիլից յետոյ արդարացաւ նաեւ Թուրքիայի արտգործնախարար Ահմէտ Տաւութօղլուն՝ ասելով, թէ ինքն անձամբ ճանաչել եւ յարգել է մտաւորական Հրանդ Տինքին: «Երբ լսեցի Հրանդ Տինքի դէմ պետութեան պաշտպանական ճառը, շատ տխրեցի: Այդ պաշտպանական ճառը ես չեմ ստորագրել, ես չէի տեսել այն, քանի որ արտասահմանում էի - նշել էր Տաւութօղլուն:

ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ ԱՏՈՐԱԳՐՈՒԵՑԱՒ

Շարունակուած էջ 1-էն

նակցեցաւ ՀԱՊԿ-ի անդամ երկիրներու ղեկավարներու ոչ պաշտօնական գագաթաժողովին:

Միւս կողմէ, Պաքու յոյս յայտնեց, որ Հայաստանուի մէջ ռուսական ռազմակայանը չօգտագործուիր Ատրպէյճանի դէմ: Ատրպէյճաի արտաքին գործերու նախարարութեան ներկայացուցիչ էլհան Պոլուխով յայտարարեց, թէ պաշտօնական Պաքուն յոյս ունի, որ Մոսկուան կը պահպանէ իր վրայ վերցուցած պարտաւորութիւնը, որ Հայաստանի մէջ տեղակայուած ռուսական 102-րդ ռազմակայանի սպառազինութիւններն ու միջոցները չեն օգտագործուիր Ատրպէյճաի դէմ:

ԻՐԱՆԸ ԼԻՑՔԱՒՈՐՈՒՄ Է ԻՐ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՌԵԱԿՏՈՐԸ



Իրանի եւ Ռուսաստանի էներգետիկայի եւ միջուկային ոլորտի պաշտօնեաների ներկայութեամբ այսօր հանդիսաւոր պայմաններում սկսուել է Իրանի առաջին ատոմային ռեակտորը միջուկային վառելիք լիցքաւորելու գործընթացը: Պաշտօնական Թեհրանի տարածած հաղորդագրութեան համաձայն, ռեակտորի լիցքաւորման գործընթացին մասնակցել են նաեւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալութեան տեսուչները:

Իրանի առաջին միջուկային ռեակտորի՝ Բուշէհրի ատոմակայանի էներգաբլոկի շինարարութիւնը մեկնարկել է 35 տարի առաջ: Ատոմակայանի շինարարութիւնը պարբերաբար յետաձգուել է, եւ աւարտին է հասցուել Ռուսաստանի աջակցութեամբ:

Թէեւ Իրանը արդէն կարողանում է հարստացնել սեփական ուրանը, այդուհանդերձ, Բուշէհրի ատոմակայանի շահագործումը իրակացնելու է Ռուսաստանը, ռեակտորը լիցքաւորուելու է ռուսական վառելիքով: Ռուսաստանը նաեւ ստանձնելու է օգտագործուած ռադիօակտիւ թափոնները Իրանից դուրս տանելու եւ չէզոքացնելու պատասխանատուութիւնը: Միացեալ Նահանգները, Իսրայէլը

յէլը եւ նրանց դաշնակից պետութիւնները պնդում են, որ Իրանի միջուկային ծրագիրը զանգուածային զէնք ստեղծելու նպատակ է հետապնդում: Հիմնականում ԱՄՆ-ի ջանքերի շնորհիւ ՄԱԿ-ի անվտանգութեան խորհուրդը բազմիցս պատժամիջոցներ է կիրառել Թեհրանի նկատմամբ, պահանջելով դադարեցնել միջուկային ծրագիրը: Իրանը կտրակաւ նապէս հերքում է այս մեղադրանքները, յայտարարելով, որ միջուկային վառելիքի արդիւնահանման եւ հարստացման իր ծրագիրը բացառապէս խաղաղ նպատակներ է հետապնդում:

«Չնայած ճնշումներին, պատժամիջոցներին եւ արեւմտեան պետութիւնների կողմից մեզ պարտադրուած գրկանքներին, այսօր մենք տեսնում ենք Իրանի խաղաղ միջուկային ծրագրի ամենամեծ խորհրդանշի մեկնարկը», - BBC-ի փոխանցմամբ, միջուկային ռեակտորի լիցքաւորման հանդիսաւոր արարողութիւնից յետոյ լրագրողներին ասել է Իրանի միջուկային ծրագրի ղեկավար Ալի Ակբար Մալէհին:

Փորձագէտների գնահատմամբ, 1 ամսից Բուշէհրի ատոմակայանը կարող է սկսել էլեկտրաէներգիայի արտադրութիւնը:

Հայաստան ժամանած օրը Ռուսիոյ նախագահը այցելեց Հայոց Յեղասպանութեան նահատակներու շուքահամալիրը, ուր ծաղիկներ զետեղեց Հայոց Յեղասպանութեան նահատակներուն Յուշակոթողին:

Հայոց Յեղասպանութեան թանգարան-հաստատութեան

տնօրէն Հայկ Դեմոյեան Երեւան այցելող նախագահ Տիմիթրի Մետվետեւին պատմած է Ծիծեռնակաբերդի շինարարութեան պատմութիւնը: Դեմոյեան ընդգծած է համալիրի նշանակութիւնն ու խորհուրդը համայն հայ ժողովուրդին համար:

Advertisement for A.B.A. Insurance Services featuring Bedros S. Maronian and Siamanto B. Maronian. Includes contact information for three Los Angeles locations, a list of services (Life, Health, Estate Planning, etc.), and a cartoon illustration of a man in a suit running. The ad also features logos for various insurance providers like New York Life, Anthem, BlueShield, Aetna, HealthNet, CIGNA, and Kaiser Permanente.

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ

ԱՊԱԳԱՆ ՄԵՆՔ ԿԸ ԱՏԵՂԾԵՆՔ: ԵԹԵ ԱՅԴ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ Է, ԱՊԱ ԱՅԴ ՄԵՐ ՄԵՂՔՆ Է: ԱՆԱԴՈԼ ՖՐԱՆՍ

## ԱՐՄԷՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ

Լեզուն հաղորդակցելու, մտածումներ, գաղափարներ արտայայտելու, անհատներու միջև կապ հաստատելու անզուգական միջոց մըն է:

Մեր լեզուն՝ հայերէնը, կապ կը հաստատէ, կամուրջ կ'ըլլայ նաեւ մեր ու մեր անցեալին միջև: Անհատին իր անցեալին հետ կապը անհրաժեշտութիւն մըն է, զորս կ'իրականացնէ իր մայրենի լեզուն: Առանց մայրենի լեզուի գիտութեան ու գործածութեան մեր անցեալին՝ մեր պատմութեան, մեր մշակոյթին հետ ամբողջական կապ հաստատել կարելի չէ:

Այսօր, Սփիւռքի տարածքին վրայ, դժբախտաբար, «հայերէն սորվեցնել»-ու անհրաժեշտութեան այնքան կարեւորութիւն չտրուիր, որքան տրուած էր իննսուն եւ հինգ տարիներ առաջ: Ջարդէն մագապուրծ ազատած սերունդը իր աղքատ, թշուառ օրերուն հայեցի դաստիարակութիւնը շատ աւելի հարկաւոր նկատած էր, քան այսօրուայ մեր հարուստ, փարթամ կեանք մը ապրող սերունդը կը նկատէ: «Հայերէն սորվեցնել եւ սորվիլ» ազգապահպանման առաջնահերթ պայմաններէն մին է եւ այդ օրէնքը երբեք չփոխուիր: Ջարդէն ազատած ժողովուրդը ազգապահպանման անհրաժեշտութեան գիտակցութիւնը ունէր: Իր միակ հարատւութիւնը իր լեզուն էր: Եթէ զայն կորսնցնէր ջարդուած, անապատին մէջ մահացած, առ յաւետ կորսուած հայէ մը տարբերութիւն պիտի չունենար: Այսօրուայ սերունդը, որ ամէն բան ունի, իր գաւկիւն կը զլանայ, բացառութիւնները յարգելով, անոր անառարկելի իրաւունքը՝ Մայրենի լեզուով դաստիարակուելու իրաւունքը:

Կ'երեւի մեր յիշողութենէն կը վրիպի խաչատուր Աբովեանի պատ-

գամը. «Ամէն լեզու սորվեցէք, բայց մեր Մայրենին զայիմ (ամուր) բռնեցէք»:

Վիքթոր Համբարձումեան ալ, 1994-ին, Արցախի հարցով, Մոսկուա հացադուլի դիմելէ առաջ հետեւեալը ըսած էր. «Ինձ յաջողող սերունդներին, թոռներին, ծոռներին եւ այլ կտակում եմ տիրապետել հայ լեզուին:...Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թէ արիւն, այլ գաղափարներ եւ գաղափարների մէջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է»:

Երբ հայախօս սերունդ հասցնելու մեր ջանքերը տակաւ առ տակաւ կը տկարանան, ընդհանրապէս կը սկսի «ոգիւղ հայ» սերունդի մը ներկայութիւնը, որուն պիտի յաջորդէ «ծնողքս հայ էր» սերունդը: Որպէս ծնողք, որպէս համայնք մեր նախապատուութիւնները փոխուած են: Գրուած է. «Քանզի ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ»: Դժբախտաբար մեր լեզուն մեր գանձը ըլլալէ դադրած է, որով մեր սիրտն ալ ուրիշ տեղ է: Ժամանակ ու մեծկակ գումարներ կը յատկացուին այնպիսի ժամանցներու, որոնք երախտան հայ մթնոլորտին կը հեռացնեն: Անտարակոյս, մթնոլորտի ազդեցութիւնը անխուսաբելի է: Տեղական սովորութիւնները մեր առօրեայէն ներս առկայ պիտի ըլլան, սակայն երբ անոնք մեր բարքերուն, ասանդութիւններուն տեղը կը գրաւեն «հայկական ոգի»-ն, եթէ հայ լեզուին հետ ամուր գործակցութիւն չունի, անգոր կը մնայ ու շուտով տեղի կուտայ: Հեռավոր Չինաստանէն մինչեւ կեղերոնական Եւրոպա ինչ-ինչ գաղթօճախներ ունէինք, որոնք նախ լեզուն, ապա ալ «հայկական ոգին» կորսնցուցին ու առ յաւետ կորան: Գոյատեւումի համար լեզուն՝ հայերէն խօսիլ անհրաժեշտութիւն մըն է:

Սփիւռքի այլասերիչ պայման-

ները հայակերտման աշխատանքին հեզասահ ընթացք չեն տար: Հարկաւոր է մաքառիլ, պայքարիլ, թէ՛ անհատական եւ թէ՛ համայնքային մակարդակով: Պայքարիլ գիտցող ժողովուրդներն են որ ապրելու իրաւունքը ունին: Երբ մեր աշխարհասփիւռ գաղթօճախները դադրեցան պայքարէ, առ յաւետ անյայտացան: Պայքարը հաւաքական յիշողութիւնը վառ կը պահէ: Լեզուի եւ մշակոյթի տեղատուութիւնը կ'արագացնէ յիշողութեան կորուստը: Երբ ժողովուրդի մը հաւաքական յիշողութիւնը սպաննուի, այդ ժողովուրդը գոյութիւնէ կը դադրի: Փոքրամասնութիւնները ձուլելու՝ առանց ջարդի անյայտացնելու, այսօրուայ ռազմավարութիւնն ալ արդէն այս է:

Իր անցեալը չարժեւորող ու իր անցեալին դասեր չքաղող ժողովուրդը ապագայ չկրնար ունենալ:


Ամէն հայ երախայ անպայման, առանց որեւէ պատճառաբանութեան, պէտք է հայկական ուսում ստանայ, գէթ՝ նախակրթարանի մակարդակով: Երախան իր այս բնական իրաւունքէն պէտք չէ զրկուի: Մեր ազգային ինքնութիւնը պահելու համար հայեցի դաստիարակութիւնը անհրաժեշտութիւն մըն է: Այս ինքնութեան պահպանումը կարելի է իրականացնել միայն ու միայն հայ դպրոցով: Հայ դպրոցն է, որ երախային պիտի փոխանցէ անոր ազգային ժառանգութիւնը, անոր մէջ պիտի կերտէ ազգային գիտակցութիւնը ու պիտի զարգացնէ ազգային պատկանելիութեան գզացումը: Թէեւ դպրոցը, իր լայն առումով, աշակերտը կեանքի պատրաստելու պարտականութիւնը ունի, սակայն մեր պարագային շեշտը պէտք է դրուի հայեցի դաստիարակութեան՝ ազգակերտման: Այս է սպասուածը հայ դպրոցին: Այս է ու այս պէտք է ըլլայ Սփիւռքի հայ դպրոցին պարտականութիւնը: Մեր դպրոցներուն պատասխանատուութիւնը պարզապէս գումար-հանում սորվեցնել չէ եւ պէտք չէ ալ ըլլայ: Այդպէս կրթութեցանք, այդպէս ալ պէտք է կրթենք: Տեղական դպրոցը, եթէ նոյնիսկ

ուսման ծրագրով աւելի արդիական թուի, ազգային ինքնութիւնը տակաւին չկազմաւորուած տղան իր հայկական արմատներէն կը հեռացնէ: Տղան հոն ոչ իր ազգային լեզուն, ոչ իր ազգային մշակոյթը եւ ալ ոչ իր ազգային կրօնքը կրնայ սորվիլ: Ոչ մէկ ծնողք իր գաւազը ազգային դաստիարակութիւնէ զրկելու իրաւունքը ունի: Ազգային դպրոցներու աշակերտութեան թիւը բարձրացնել եւ համայնքային օժանդակութիւնը մի քիչ աւելցնել մեր դպրոցները կը հասցնէ նախանձելի մակարդակի: Հայ դպրոցը գոյատեւելու համար հայ աշակերտի կը կարօտի, հայ տղան ալ հայ գոյատեւելու համար՝ հայ դպրոցի: Համայնքը, նկատի առնելով թէ՛ դպրոցին եւ թէ՛ աշակերտին փոխադարձաբար ունեցած կորուստը, իր բոլոր միջոցներով ծնողներու վրայ իր բարոյական ազդեցութիւնը պէտք է գործադրէ:

Երախան միայն ու միայն հայկական դպրոցին մէջ կրնայ սորվիլ Արշակ Զօպանեանի «Գեղօն Ի Պատիւ Հայ Լեզուին», Եղիշ Զարեցի «Ես Իմ Անուշ Հայասանի», Սիլվա Կապուտիկեանի «Խօսք Իմ Որդուն», Յովհաննէս Ծիրազի «Պատգամ Սփիւռքահայութեան», Վահան Թէքէեանի «Տաղ Հայերէն Լեզուին»... նման այժմէականութենէ չդադրող բանահիւստութիւններ, որոնք իր հոգեւն մէջ հայկականութիւն պիտի բոցավառեն: Իր մէջ իր պատկանելիութեան գզացումները պիտի զօրացնեն: Իր գոյատեւելու պայքարին ազգակ պիտի ըլլան:

Տղան միայն հայկական դպրոցին մէջ կրնայ իմանալ Ֆրանսացի գրագէտ Վիքթոր Հիլլոյի «Ձեր լեզուին մէջ Արեւելքն է որ կը գզամ, դարերը կը նշմարեմ այնտեղ: Կը տեսնեմ անցեալի խորհրդաւոր նշոյլի շողարձակումը: Ինձի համար պարծանք է հայերէնի թարգմանուիլ» նախադասութիւնը, կամ Անգլիացի բանաստեղծ Ճորճ Պայրընի հայերէնի մասին գաղափարը. «Հայերէնը հարուստ լեզու է եւ լիովին կը

Շար.ը էջ 17



## Կազմակերպութեամբ՝

# Նոր Սերունդ Մշակութային Միութեան

### Շնորհանդէս

## Արմէն Ղարիպի «Յուշերու Բագին» հատորին

Գիրքը կը ներկայացնէ՝


## ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

«Մասիս» Շարաքաթերթի գլխաւոր խմբագիր

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, Սեպտեմբեր 2, 2010ին,  
Երեկոյեան ժամը 8ին,  
ՀԿԲՄԻ «Կարօ Սողանալեան» սրահին մէջ,  
1060 N Allen Ave. Pasadena

Կը ներկայացուի գեղարուեստական պատշաճ յայտագիր

Մուտքը Ազատ
Հիւրասիրութիւն



# «ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀՈՂԻ ԿԱՆՉՈՎ» ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեան ներքոյ սոյն թուականի Օգոստոս 3-ից 8-ը Հայաստանի Հանքաւան լեռնային շրջանում անցկացուեց երիտասարդական բանակում, որ կրում էր «Հայրենեաց հողի կանչով» խորագիրը: Աշխարհի բազմաթիւ երկրներէից ժամանած հնչակեան եւ համակիր երիտասարդները, միանալով Հայաստանի «Մարգիս Տիրուհի» միութեան իրենց ընկերներին, 5 օրերի ընթացքում հասցրեցին անցկացնել բուռն եւ հետաքրքիր ժամանակ՝ համեմուած մարզական խաղերով, թատերական ներկայացումներով, այլ բանակավայրերի հետ մրցումներ կազմակերպելով, ինչպէս նաեւ Հայաստանի տարբեր գեղատեսիլ շրջաններում պտոյտներ անցկացնելով: Մինչ բանակումի մեկնարկը, ՄԴՀ Սուրբիայի շրջանից ժամանած երիտասարդ ընկեր-ընկերուհիներ, ինչպէս նաեւ Հայաստանի ՄԴՀ ուսանողական-երիտասարդական միութեան մի խումբ անդամներ ուխտագնացութեան մեկնեցին Մեղրի՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով Հնչակեան անմահ Հերոս Փարամազի շիրիմին: Այնուհետեւ երիտասարդ հնչակեանները հանդիպում ունե-



յայտ Զինուորի, Սպարապետ Վազգէն Սարգսեանի, Զօրավար Անդրանիկի, ինչպէս նաեւ Արցախեան Ազատամարտում ընկած Հնչակեան ֆեդայիների շիրիմներին, երգեցին «Տուր Զեռքը Ընկեր» մարտական քայլերգը՝ իւրատեսակ երգում տալով արժանի լինել նախնեաց յիշատակին: Այնուհետեւ բանակումի մասնակիցներին ողջունեցին ՄԴՀ ԿՎ ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանը, ՄԴՀ ԿՎ անդամ ընկ. Վահան Շիրխանեանը,



ուղեկցեց եւ պատմած շակութային արժէքների մասին դասախօսութիւն տուեց ՄԴՀ Հայաստանի շրջանի վարիչ Մարմնի անդամ, պետական երեսփոխան ընկ. Վարդան Խաչատրեանը: Գալիք օրերին բանակավայր այցելեցին ՄԴՀ ԿՎ ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեանը, ՄԴՀ ԿՎ փոխատենապետ, Լիբանանի պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալպակեանը, ԿՎ անդամներ ընկ. Յակոբ Տիգրանեանը, ընկ. Վահան Շիրխանեանը, ընկ. սօքթ. Եղիկ ձերեճեանը: Ընկեր ձերեճեանը հանդէս եկաւ ծաւալուն դասախօսութեամբ, որտեղ ներկայացրեց ՄԴՀ հերոսական պատմութիւնից մի քանի դրուագներ, բացատրեց ներկաներին Հնչակեան կուսակցութեան համազգային առաքելութիւնը: Ընկ. Վահան Շիրխանեանը, ով պատերազմի տարիներին ղեկավարել էր Հայաստանի պաշտ-

պանութեան կոմիտէն, երկար տարիներ եղել նաեւ պաշտպանութեան փոխնախարար, բանակումի մասնակիցներին դասախօսեց Արցախեան պատերազմի մասին, լիջեցրեց, որ Արցախի պաշտպանութեան առաքելութիւնը ողջ Հնչակեան կուսակցութեանն է, թէ Հայաստանում եւ թե Սփիւռքում:

Աւելացնենք նաեւ, որ բանակավայր այցելեց ՀՀ Սփիւռքի նախարար տիկին Հրանուշ Յակոբեանը, ով խոստացաւ ներկաներին յաջորդ տարի բանակումի կազմակերպման համար պետական աջակցութիւն ցուցաբերել:

5 անմոռանալի օր տեւած բանակումն իր տրամաբանական աւարտը գտաւ Միծեռնակաբերդում, որտեղ բանակումի մասնակիցներն իրենց գլուխը խոնարհեցին դարասկզբին թրքական եա-

Շաբ.բ էջ 18



ցան ՄԴՀ Մեղրիի շրջանի «Փարամազ» մասնաճիւղի անդամների հետ: Հանդիպման մասնակիցներ ՄԴՀ Հալէպի շրջանի վարիչ Մարմնի անդամ ընկ. Վազգէն Մեսրոպեանը, ՄԴՀ Հայաստանի շրջանի վարիչ Մարմնի անդամ, արցախեան ազատամարտում իրեն լաւագոյնս դրսեւորած «Փարամազ» ջոկատի հրամանատար ընկ. Վոլոդիա Ազատեանը, Մեղրիի ՄԴՀ «Փարամազ» մասնաճիւղի ատենապետ ընկ. Սերգոյ Գալստեանը հաւաքուած խանդավառ երիտասարդներին պատմեցին հետաքրքիր դէպքեր արցախեան ազատամարտից, լիջեցին, թէ ինչպէս էին Մեղրու հնչակեանները անհաւասար բաց եւ յաղթական մարտեր մղում ազերի ոստիի դէմ:

Ինչ վերաբերում է բուն բանակումին, ապա 150-ից աւել երիտասարդներ՝ Հայաստանից, Սուրիայից, Լիբանանից, Ֆրանսայից եւ Ամերիկայից, 5 օրերն անցակցրին իբրեւ մեկ միասնական ընտանիք՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան գաղափարներով տոգորուած: Բացումը տեղի ունեցաւ եռաբլուրում, որտեղ «Հայրենեաց հողի կանչով» բանակումի մասնակիցները ծաղիկներ դրեցին Ան-

ՄԴՀ Հայաստանի շրջանի ատենապետ ընկ. Գէորգ Պերկուպերեանը, ՄԴՀ Հայաստանի շրջանի վարիչ Մարմնի անդամ, պետական երեսփոխան ընկ. Վարդան Խաչատրեանը: Իրենց ելույթներում յարգելի ընկերները կոչ արեցին բանակումի մասնակիցներին հաւատարիմ լինել նախնեաց սուրբ պատգամին, մնալ աննկուն եւ երբեք ետ քայլ չանել Հնչակեան վեհ գաղափարից:

Բացումից անմիջապէս յետոյ բանակումի մասնակիցները մեկնեցին բանակավայր, որտեղ հանդիսաւոր պայմաններում վեր բարձրացուեցին Հայաստանի եւ ՄԴՀ դրօշները: Նոյն օրն իսկ երիտասարդները բաժանուեցին 4 հաւասար խմբերի, որոնք կրում էին Հնչակեան հերոսներ Փարամազի, Մեծն Մուրատի, Պանդուխտի եւ Հայկ Բժշկեանցի անունները:

Յաջորդ օրերին բացի բանակավայրային կեանքից, երիտասարդ ընկեր-ընկերուհիները այցելեցին Հայաստանի բազմաթիւ պատմած շակութային վայրեր, որտեղ նրանց հանգամանալից ներկայացուեց այդ վայրերի պատմական նշանակութիւնը, ծագումն ու պատմութիւնը: Գառնիում եւ Գեղարդում բանակումի մասնակիցներին

*Հնչակեան*  
*Խաչատրեան*

ՖԵԼԷՏԻԼ ԵՒ ԱՂԱՆԹԵՐՆԵՐ

Կազմակերպութեամբ՝  
**ԿԼԵՆՏԷՅԼԻ**  
**ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ**  
**ՄԱՍՆԱԾԻՒՂԻ**

**Շաբաթ, 28 Օգոստոս 2010**  
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝  
**(626) 797-7680**

### ՊՈՍԹՈՆ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՀՈԳԵՂԱՆԳԻՍ



Հնչակեան քսան կախաղաններու նահատակութեան 95-ամեակին առթիւ Պոսթոնի նորահաստատ Հնչակեան մասնաճիւղի վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր ոգեկոչելու մեր հերոս նահատակներու յիշատակը: Ար-

եղեռնի Նահատակաց յուշարձանին առջեւ: Սոյն միջոցառումին ներկայ էին Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ վազգէն Գալթագճեան, ինչպէս նաեւ Հ.Մ.Մ.ի Կեդրոնական վարչութեան նախկին ատենապետ Տիգրան Սարաֆ-



ղարեւ, Կիրակի, Յուլիս 18ին ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին: Հոգեհանգստեան արարողութենէն ետք տեղի ունեցաւ ծաղկեպսակի գետեղում եկեղեցուց բակին մէջ կանգնած Հայոց Մեծ

եան եւ ԱՄՆ-ի Հ.Մ.Մ.ի Շրջանային վարչութեան ատենապետ վարդան Քէօրօղլեան: Այնուհետեւ Պոսթոնի Հ.Բ.Ը.Մ.ի սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ, որուն աւարտին գործադրուեցաւ պատշաճ յայտագիր նուիրուած Հնչակեան քսան ուսուցիչներուն:

### ՊՈՍԹՈՆԻ Հ.Մ.Մ.Ը ԿԸ ՎԵՐԱՇԽՈՒԺԱՆԱՅ

Վերջերս Պոսթոնի եւ շրջակայքի Հայ Մարմնամարզական Միութեան անդամները գումարեցին իրենց տարեկան ընդհանուր անդամական ժողովը: Այս հաւաքին ներկայ էին եւ ելոյթներ ունեցան հիւրաբար քաղաքս գտնուող պատասխանատու ընկերներ վազգէն Գալթագճեան (Պաթոն Ռուժ), վարդան Քէօրօղլեան (Փասատինա) եւ Տիգրան Սարաֆեան (Պըրպէնք): Ժողովը յետ մահու յատուկ գնահատականով յիշեց անունները նախկին պատասխանատուներէն Գաբրիէլ Չինարի, Մարտիրոս Եափուճեանի եւ Թորոս Պալեանի

անունները: Նախորդ շրջանի Հ.Մ.Մ.ի գործունէութեան գնահատականը կատարելէ ետք ներկաները մշակեցին յառաջիկայ տարուան գործունէութեան նախագիծը: Այնուհետեւ ընտրուեցաւ Հ.Մ.Մ.ի նոր վարչութիւնը որ կը բաղկանայ հետեւեալներէ. Հայկ Չափեան, Յարութիւն Չինար, Գրիգոր Մահաբէրեան, Ստեփան Անդրէասեան, Փիէռ Եափուճեան, Մանուէլ Չիմէնեան, Յակոբ Աշճեան, Գրիգոր Պողարեան, Գառնիկ Չափրաստեան, Դաւիթ Եափուճեան եւ վազգէն Եափուճեան:

### ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ ՖՐԵՉՆՕ ՔՈՅՐ ՔԱՂԱՔՆԵՐ



Ս.Թ. Օգոստոսի 16-ին Ֆրեզնոյի քաղաքային խորհրդում կայացել է էջմիածին եւ Ֆրեզնո քաղաքների համագործակցութեան մասին համաձայնագրի ստորագրման արարողութիւնը: Արարողութեանը մասնակցելու համար Հայաստանից Ֆրեզնո է ժամանել պաշտօնական պատուիրակութիւն՝ էջմիածնի քաղաքապետ Կարէն Գրիգորեանի գլխավորութեամբ: Ստորագրուած համաձայնագիրը նախատեսում է երկու քաղաքների բնակիչների միջեւ բարեկամական կապերի հաստատում, մշակութային եւ գիտական կապերի զարգացում, համագործակցութիւն տուրիզմի, գինեգործութեան եւ գիւղատնտեսութեան ոլորտներում: Համաձայնագրի ստորագրման պաշտօնական արարողութեանը ներկայ էին ԱՄՆ կոնգրեսական Ճիմ Կոստան (20-րդ շրջան), Շրջանային

Վերահսկիչների խորհրդի անդամներ Տեքսի Փուչիկեանը, Ֆիլլ Լարսենը, Ֆրեզնոյի քաղաքային խորհրդի անդամ Անդրէաս Բորգեսը: Ֆրեզնոյի քաղաքապետ Աշլի Սվեթենճեանը նշել է, որ Ֆրեզնոն ԱՄՆ խոշորագոյն գիւղատնտեսական կենտրոններից է: Ֆրեզնոյում ապրում է ամենահին ու համախմբուած հայկական համայնքը: Ճիմ Կոստան, շնորհաւորելով երկու քաղաքապետերին համագործակցութեան համաձայնագրի ստորագրման կապակցութեամբ, խօսել է Ֆրեզնոյի զարգացման գործում նշանաւոր հայերի մասնակցութեան դերի մասին: Նա ընդգծել է նաեւ Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչման ուղղութեամբ համատեղ ջանքերի կարեւորութիւնը: Արարողութեան աւարտին քոյր-քաղաքների ղեկավարները յուշանուէրներ են փոխանակել:

### ԳՐՈՂՆԵՐՈՒ 5-ՐԴ ՀԱՍԱԳՈՒՄԱՐ

#### ԱՐԱ ԱՀԱՐՈՆՅԱՆ

Կլենտէյլի Կեդրոնական Հանրային Գրադարանի հանդիսասրահը գրաւէր ընտրանի մը հաւաքուած էր Ուրբաթ 13 Օգոստոսին, ունկնդրելու հետաքրքրական ձեռնարկ մը: Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած ձեռնարկը, խորքին մէջ ասուլիս մըն էր՝ Երեւանի մէջ Յունիս 28 միջնաէջ Յուլիս 2 կայացած գրողներու Համահայկական 5-րդ Համագումարին՝ Լոս Անճելըսէն ներկայ գտնուող երեք մտաւորականներու միջեւ: Ասուլիսին՝ բացման խօսքով ընթացք սուրա ԹՄՄ Լոս Անճելըսի մասնաճիւղի ատենապետ Վաչէ Սեմեճեան, որը ներկայացուց ձեռնարկին նպատակը եւ հրաւիրուած մասնակիցները: Ան ողջունեց ներկայութիւնը Լոս Անճելըսի մօտ

Հայաստանի Հանրապետութեան յարգելի հիւպատոս Պրն. Մեսրոպ Շապոյեանի, ապա բեմ հրաւիրեց ասուլիսի վարիչը՝ մտաւորական եւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ Յարութ Տէր Դաւիթեանը: Ան եւս Համագումարին արժէքին ու բերած նպաստին մասին անհրաժեշտ կարեւորութեամբ մեկնաբանութիւններ ներկայացուց՝ իր նպատակալարմար հարցադրումները սկսելէ առաջ: Ասուլիսին առաջին խօսողն էր դաստիարակ եւ գրող Յովսէփ Նալբանտեանը: Ան հաստատեց Համագումարին հերթականութեան բերած նպաստը Հայաստան-Սփիւռք կապերուն, գրողներու միջեւ ստեղծուած ծանօթութիւններուն եւ բարեկամութիւններուն օգտակարութիւնը շեշտեց, յիշեցնելով որ հեր-

Շաք.ք էջ 17

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

833 W. Glenc Oaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor

**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածախաներու եւ մանուկներու Քարոսթիոթերի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօզային եւ մկանային ցտեր:  
Ինքնաշարժի վթարի նետանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



# Massis Weekly

Volume 30, No. 30

Saturday, AUGUST 28, 2010

## Armenia and Russia Sign Extends Defense Pact Medvedev: "Russia Takes Its Obligations to Its Allies Very Seriously"



Serzh Sarkisian greeting Dmitry Medvedev in Yerevan

YEREVAN -- Armenia and Russia signed a deal last Friday extending the presence of Russian forces in the republic by decades, bolstering Moscow's military clout in the strategic South Caucasus region.

Russian President Dmitry Medvedev and his Armenian counterpart Serzh Sarkisian oversaw the signing of the deal in Yerevan during a visit by the Russian leader.

The agreement will see Moscow extend its lease on a military base in Armenia from 2020 to 2044 and upgrade the mission of the estimated 3,000 Russian troops stationed there to include providing for Armenia's security.

It also calls for Russia to assist Armenia in securing arms and modern

military equipment.

Medvedev used the signing of the deal to signal that Russia still considers itself the leading power in the region.

"Russia's task as the largest and most powerful state in the region... consists of maintaining peace and order," he said.

Asked if Russia would intervene in a conflict involving Armenia, Medvedev said: "Russia takes its obligations to its allies very seriously."

Russian President Dmitry Medvedev had arrived in Yerevan on Thursday on a state visit. President Sarkisian and his wife Rita went to Yerevan's airport Zvartnots to meet the arriving Russian leader and his

Continued on page 4

## Turkish FM Names Preconditions for Border Opening with Armenia

ANKARA -- Turkish Foreign Minister Ahmet Davutoglu touched upon the prospects of the Armenia-Turkey border opening in his speech on one of the Turkish TV channels and sang the same song over and over again.

As to any developments related to the Armenia-Turkey Protocols, Davutoglu said Turkey views Caucasus as a whole and wishes all the obstacles to be removed, which also involves the opening of the Armenia-Turkey border, Turkish Star daily reports.

However, Turkish FM again reiterated the preconditions for the border opening. According to him, to eliminate physical barriers, it is necessary to first eliminate psychological, political and geopolitical barriers. Caucasus should become a whole economic basin. That is, it is necessary for Armenia to stop the "occupation of 20% of Azerbaijani lands," he said, stressing Armenia-Turkey relations are at the highest level within the recent 20 years.

## Database on People Related to Armenian-Turkish Process Created

USAID jointly with the Eurasia Partnership foundation elaborated certain document containing information on persons, organizations and agencies activities of which are somehow related to the Armenian-Turkish relations. According to some information, the database was created by Turkish and Armenian experts. However, the objective is yet unclear. It is also unclear whether the document will be available for public.

## Armenians' Lawsuit Against Deutsche Bank Is Dismissed

LOS ANGELES -- On July 30th the United States District Judge Margaret Morrow dismissed the case by a group of Armenians against Deutsche Bank and Dresdner Bank, court records show.

In its ruling the Court was primarily concerned about the statute of limitations, meaning that the claims were brought too long after the fact. The court also held that there was a lack of proof of family bank account for most plaintiffs, and that such money held by the banks was not thereafter returned to the rightful owner.

In 2006 attorneys Brian Kabateck, Vartkes Yeghiayan and Mark Geragos, all of Armenian descent, on behalf of a group of descendants of the Armenian Genocide filed a class action lawsuit

against the two German banks.

The lawsuit was seeking the recovery of millions of dollars of money and property of Armenians wrongfully withheld by the Deutsche Bank and Dresdner Bank following the Armenian Genocide. The lawsuit charged that the banks have maintained possession of Armenian families' money and assets deposited by Armenian families prior to 1915 as well as assets looted by the Ottoman Turkish government. The lawsuit stated that the banks profited from the atrocities committed against the Armenian people in the Ottoman Turkish Empire by concealing and preventing the recovery of assets rightfully belonging to Armenian families.

The three attorneys have decided not to appeal the Court's ruling.

## U.S. State Department Has Failed to Deliver US Assistance to Karabakh

A senior Nagorno-Karabakh official on Wednesday downplayed the U.S. State Department's apparent failure to deliver much of direct U.S. economic and humanitarian assistance to the disputed region that has been allocated by Congress.

U.S. legislators have allotted a total of \$61 million in such assistance since 1998, ignoring White House objections and vehement protests from Azerbaijan. Armenian-American lobby groups have been instrumental in the aid allocations. Less than \$36 million of that aid has actually been expended by the U.S. government so far.

Nagorno-Karabakh's leadership

seems slightly unhappy with the shortfall. "Before expressing concern, I think one must emphasize the fact that the U.S. government has directly provided assistance to Nagorno-Karabakh," Vahram Atanesian, the chairman of the Karabakh parliament's committee on foreign relations, told RFE/RL's Armenian service. He said the very fact of the United States directly helping the republic is "exceptional" in itself.

Atanesian suggested that the delay may be linked with economic growth in Karabakh that has averaged 12 percent per annum in recent years. "That is not a secret to the United States," he said.

## European Court of Human Rights Finds Turkey Guilty in the Murder of Hrant Dink

STRASBURG -- The European Court of Human Rights in Strasbourg has found Turkey guilty of failing to prevent the murder of Editor of the Agos daily Hrant Dink and properly conduct an investigation to disclose the crime.

The Turkey-based Milliyet daily reports the Court verdict will be published in the press this September.

Hrant Dink was accused of violating notorious Article 301 of the Turkish criminal code, "insulting Turkishness," which set the scene for the murder. The causes célèbres were the ones involving Orhan Pamuk, one of the most prominent Turkish novelists and winner of the Nobel Prize in Literature, and Hrant Dink. The former had to leave Turkey, the latter was assassinated near his office in Istanbul in January 2007. As it turned out later, both police and gendarmerie were well informed of the planned crime.

Turkish officials' actions show

they expected the European Court of Human Rights to sustain Hrant Dink's family claim. To justify themselves, Turkish officials issued certain statements.

During his visit to Baku the Turkish President stated the Government had not taken necessary measures to prevent the crime. A few days later he invited Dink's brother to his residence.

Turkish FM Ahmet Davutoglu tried to justify himself by stating he had not been informed of or signed the speech for the defense the Turkish Government sent to the European Court. In that document Dink was described as a neonazi.

Turkish Ministry of Foreign Affairs also issued a statement to reject accusations implicating Turkish government's failure.

"The loss of Hrant Dink led to a profound sorrow in our country. The Turkish justice has been investigating all aspects of the killing with determination," the statement said.

### Armenia Marks Independence Act Anniversary



The Declaration of Independence

YEREVAN -- Armenia on Monday celebrated the 20th anniversary of adopting a declaration of independence that marked the beginning of its formal secession from the crumbling Soviet Union.

The declaration passed on August 23, 1990 by the Supreme Council of Armenia, the then the Soviet republic's first post-Communist legislature, declared Armenia's desire to seek an independent statehood and followed similar declarations passed by the legislatures of the Soviet Baltic republics of Lithuania, Estonia and Latvia.

It took another 13 months for the Armenians to complete the process of their independence from Moscow in a formal referendum in September 1991 that was held amid so-called "independence parades" by then Soviet republics. The Soviet Union ceased to exist at the end of that year and the sovereignty and independence of its former 15 republics, including Armenia, was recognized by the international community shortly.

Aram Manukian, the youngest of Supreme Council members back in 1990 who read out the text of the Declaration, describes it as "the best document in the history of our people" and remembers that day as "an hour of triumph". "Nations live through such moments vary rarely. I am proud to have been part of it and feel great responsibility," Manukian told RFE/RL's Armenian service.

"No one has yet criticized it [the 1990 Declaration of Independence].

Nobody has the courage, knowledge or reasons to cast a shadow on this document, which is full of romanticism, realism and political literacy, as well as will, dream and desire that indeed was collective back then. In this sense this document is perfect," added Manukian.

Manukian, who is a senior member of independent Armenia's first president Levon Ter-Petrosian's Armenian National Congress opposition alliance, however, sees some serious losses that Armenia has suffered.

"We have taken the way of losing independence in the past ten years," he said. "All the international treaties, all documents, all resolutions passed on Armenia are a loss for Armenia. It is also a loss that the guys who struggled for independence are now in prisons. This is a disgrace."

Local opposition parties also claim that successive governments in Armenia have failed to honor most of the provisions of the 1990 document or have deviated from them.

Hovsep Khurshudian, a spokesman for the opposition Zharangutyun (Heritage) party, maintained that only three out of a dozen points of the Declaration have actually been translated into action during these years.


"The rest remain on paper. Unfortunately, such distortions have happened because of all the three governments that Armenia has had since 1991. And today we suffer the consequences of the lust for power, financial gain and other shortcomings of certain leaders," he added.

### Armenia May Sue Turkey for Golden Apricot Brand

YEREVAN -- The Armenian organizers of Golden Apricot International Film Festival will possibly file a lawsuit against Turkey for organizing a festival of the same name (Golden Apricot) in the Turkish city of Malatya.

In an August 20 article Milliyet reported that the first international film festival will be held in Malatya. The main prize of the festival will be called Golden Apricot. However, the article also noted that similar festival had been held in Armenia since 2004.

The press service of the Armenian Golden Apricot festival told NEWS.am that the Yerevan festival



has nothing in common with the mentioned event. The organizers of the Yerevan festival also stressed that after they study the details, final decision on suing Turkey for using Golden Apricot brand will be made.

### Turkish Police Break Up Children's Prayer in Armenian Church

Turkish police ushered a group of Armenian children out of a 10th-century Armenian Christian church on the island of Akdamar in Anatolia after the children began lighting candles, singing hymns and engaging in prayer.

The church of Sourp Khatch, or Holy Cross, was a cathedral of the Armenian Apostolic Church dating back to the 10th century; its priests and monks were murdered and monastery at the church destroyed in the Armenian genocide of 1915. In 2005-06, as part of the fitful path toward reconciliation between Armenia and Turkey, the Turkish government launched a costly and controversial restoration of the cathedral building, which reopened in 2007 as a secular museum in a ceremony to which Armenian government officials and the international press were invited.

Since then, Turkish officials have been reluctant to allow any religious activities at the site beyond a service scheduled for the end of this month, a stance that has offended Armenian religious leaders. Meanwhile, some Muslim Turks have also protested the church's reopening on the grounds that a Christian place of worship, even if run as a museum, is inappropriate in a Muslim country.

Armenian children on field trip ousted for religious activities at Sourp

Khatch church in Turkey

It was in this context that the visit of a group of Armenian schoolchildren to Sourp Khatch became an international incident. The children were on a field trip sponsored by an Armenian youth education group called Hay Aspeth (Armenian Knight). When the children began to light candles in the church, a Turkish policeman in the building told them they could not, as the soot from the candles would stain the church walls. The group then moved into the center of the room with their lit candles and began to sing and pray, at which point the police told them to leave the church.

The children and their escorts continued to sing and pray outside the building, on the church grounds, but police also disrupted their efforts to light incense and candles at grave-stones and cross-stones in the churchyard.

The field trip, which ended Aug. 17, was sponsored by Hay Aspeth in order to introduce Armenian youth to the historic heart of Armenia, which lies today in eastern Turkey.

Some Turkish newspaper commentators have criticized the Turkish government's behavior in reopening the church as largely a publicity stunt to score points in the court of world opinion.

### U.S. Embassy Car Involved in Road Accident in Armenia's Capital



